

**ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗ
РЕНИЕ.
BOOK REVIEWS**

**ԳԻՐՔ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 2022 թ. գիտական գործունեության արդյունքներն ամփոփող «Տեղեկագիրք»-ը (կազմող՝ լեզվի ինստիտուտի տնօրինություն)¹:

Տպաքանակի սահմանափակությունը չի խանգարում ընթերցող լայն շրջաններին նման գրքի մասին ունենալու ամբողջական պատկերացում, որովհետև այն ավիզատ լույս է տեսնում ոչ միայն հայերեն, այլև անգլերեն և ռուսերեն լեզուներով, ընդամին անգլերեն և ռուսերեն բաժինները համեմատաբար ավելի սեղմ են, քան հայերենինը, որը, բնականաբար, գրքի հիմնական մասն է: Անգլերեն և ռուսերեն բաժինները, հավանաբար, հայերեն բաժնում տեղ գտած հրապարակումների (մենագրություններ, հոդվածներ և այլն) ամփոփումներն են:

Գրքի հիմնական՝ գիտական հրապարակումների բաժինն ունի երկու մաս:

Առաջինում ներկայացվում են ինստիտուտի 2022 թ. գիտական գործունեության արդյունքները, ընդ որում իբրև հիմնական, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված, այլև կիրառական աշխատանքների արդյունքներ, որոնց հաջորդում է հրապարակումների ցանկը, իսկ երկրորդում՝ այդ արդյունքներն են ըստ գիտական գործունեության ոլորտների՝ գործող բաժինների հաշվով:

Կազմողների կողմից հերթականություն է սահմանվել արդյունքները սեղմ ձևով տալ արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման, ընդհանուր և համեմատական, կիրառական լեզվաբանության, հայ բարբառների, հայոց լեզվի պատմական զարգացման ուղղություններով:

¹ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Տեղեկագիրք» (2022 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023, 256 էջ:

«Տեղեկագիրք»-ն ամենից առաջ կարևոր է այն իմաստով, որ գերհազեցած տեղեկատվության-հաղորդակցական ներկա պայմաններում հանրության ընթերցող կամ մասնագիտորեն հետաքրքրվող մասը հազիվ թե ժամանակ գտնի ուշադրություն հատկացնելու գիտական այս կարևոր հաստատության մի քանի տասնյակից ավելի, ընդ որում տարբեր հանդեսներում լույս տեսած տարաբնույթ մասնագիտական հարցերի: Այնինչ այդ հնարավորությունը, բնականաբար, տալիս է նման գիրքը, որը սեղմ ձևով ներկայացնում է այդ հարցերը՝ իրենց բովանդակային ամբողջության և կարևորության մեջ:

Ինստիտուտի լեզվաբան մասնագետների գիտական ամենօրյա գործունեության արդյունքները մատենագրորեն ամփոփող և սեղմ ձևով ներկայացնող սույն գիրքը հասցեագրվում է հայագիտության լայն շրջաններին, ուստի այն ունի նաև ճանաչողական նշանակություն:

Տեղին է բերել գրքի հետևյալ ամփոփումն առ այն, որ «Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2022 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների: Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար»:

Հայտնի է, որ գիտական (և ոչ միայն) միջավայրում տեղեկագրային նման հրապարակումներն ունեն իրենց ավանդույթը, որն այսօր ևս հնարավոր է շարունակել: Լեզվի ինստիտուտը վերջին տարիներին այդ ավանդույթը շարունակողներից է, որն անպայման վեր է ամեն մի գերազնահատությունից:

Ինստիտուտի տնօրինության նման ձեռնարկումն ունի գիտակամակերպական նշանակություն:

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԼԵԶՎԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Լույս է տեսել լեզվափոխության Ա. Ս. Աբրահամյանի գիտական հոդվածների համահավաք ժողովածուն²: Այն մի տեսակ վերհիշեցում է այս կյանքում սովորական պահվածքով հայտնի, սակայն գիտության մեջ մտածողության մի յուրօրինակ անհատականություն հանդիսացող մտավորականի մասին:

Հայ լեզվաբանության մեջ, հայտնի բերումով, ինձ հանդիպած գործընկերներից անպայման նա առանձնանում էր, մենք ընկերներ էինք լեզվի վերացարկումային գնահատության շատ հարցերում, որոնք հասնում-բախվում էին մեր օրերի տեսական լեզվաբանության վառ ներկայացուցիչներից Է.Աթայանի հայացքներին: Սկզբնական այդ շրջանից ես անցա հնդեվրոպաբանությանը, հայերենի պատմությանը՝ համեմատական-տիպաբանականի մենաշնորհով, թեև ընդհանուր լեզվաբանությունն էլ մնաց իմ հետաքրքրությունների մեջ՝ ձև առած, օրինակ, բուհական իմ մի դասագրքում:

Այնինչ Ա. Ս. Աբրահամյանը իր դավանած պատմավերլուծական լեզվաբանությունը պատմականից հետևողականորեն փոխադրեց փոխ-սովայական լեզվաբանություն՝ երկու դեպքում էլ անպայման տեսական հիմքերով և նույնպիսի ելքերով:

Այս թեմայով տարբեր տարիների նա գրեց մեկը մյուսից տարբեր, սակայն մեկը մյուսին հարակից ու ներկուտ հոդվածներ, որոնք լույս տեսան հայերեն և այլ լեզուներով, լույս տեսան գիտական օրինակելի հանդեսներում, գիտաժողովների նյութերում: Դրանք անգերազնահատելի աշխատություններ են, որոնք զարգացնում են հայ տեսական-փոխ-սովայական լեզվաբանությունը՝ անկայան ապահովելով առաջընթաց, տալով գիտական-իմացական ինքնատիպության վառ օրինակ:

Այս ժողովածուն ներառում է Ա. Ս. Աբրահամյանի միայն այն հոդվածները, որոնք վերաբերում են, ինչպես որ ճիշտ վերնագիր են դրել հետմահու լույս տեսնող գրքի կազմողները, իրականությանը, լեզվագիտակցությանը և նշանին: Ես, որ ըստ ամենայնի ծանոթ եմ նրա հրապա-

² Ա. Ս. Աբրահամյան, Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Ե., ԵՊՀ հրատ., 2023, 304 էջ:

րակումներին, հարկ եմ համարում նշել, որ հայտնի են նաև լեզվաբանի ուրիշ աշխատանքներ, որոնք տեղ չեն գտել այս ժողովածուի մեջ:

Ժողովածուն բաժանված է գլուխների, նրանց ներսում՝ բաժինների:

Գլուխներից երկուսում հարցերի քննությունը ձգվում է նշանային նվազագույն միավոր հնչյունից մինչև առավելագույնը՝ ասույթը: Լեզվական այդ իրակությունների նշանային-փիլիսոփայական առանձնացումը, վերլուծությունը և արժևորումը այդ գլուխների բաժիններում է, որ բնագավառի մասնագետներին հայտնի էին հեղինակի՝ տարբեր տարիների գրած հոդվածներից: Այստեղ Ա. Ս. Աբրահամյանը, անպայման, լեզվափիլիսոփա է, որ իմացական իր էրուդիցիան դնում է նաև հայ լեզվաբանության անվանիներ Ա. Այտընյանի, Է. Աղայանի, Է. Աթայանի և Ս. Աբրահամյանի՝ համընկնող և հարակից հայացքների տեղին գնահատությանը, և դա ամբողջացնում է այս ժողովածուն (գիրքը կազմողները դա տեղին են նկատել և ճիշտ են վարվել):

Գիրքն ունի հավելվածներ, որ ներառում է հեղինակի տարբեր լեզուներով գրված մյուս հոդվածներ, որոնք այնքան էլ հեռու չեն (եթե գիրքը կազմողները հեռու են համարել) բուն գլուխների և բաժինների մեջ տեղավորվածներից. հավելվածներից մեկն էլ հեղինակի «աշխատությունների մատենագիտական ցանկն» է:

Այս գրքում կան մի շարք նորություններ՝ տարբեր հարցերի վերաբերյալ: Նշենք միայն մեկի մասին:

Հայտնի է, որ բառը իմացաբանորեն երկալան միավոր է՝ իբրև հասկացության անվանման (նշանակման) ամբողջություն, այնինչ հնչյունը լեզվաբանության մեջ սովորաբար այդպիսին չի դիտվում, որովհետև, ինչպես կարծում են, հասկացական (դենոտատային) նշանակում չի պարունակում: Այնինչ կարելի է մեկ այլ (թեկուզ հակառակ) կողմից քննել հարցը, և այս ուսումնասիրության առաջին գլխի («Լեզվի ստորակարգային միավորների նշանագիտական իմաստավորումը») առաջին բաժնի երկու մասերում այդ քննությունը իրականացվում է իմացական ուժի հսկայական ներդրումով. դա խիզախ ձեռքբերում է լեզվի նշանային փիլիսոփայության հիմունքով:

Ա. Ս. Աբրահամյանի գիրքը, բնավ չենք վարանում ասելու, հայ լեզվաբանության ձեռքբերում է, որ հասցեագրվում է ամենից առաջ մասնագետներին՝ ներկայիս և գալիք, և դա նշանակալից է:

**ՀԱՅՈՑ ԱՅՐՈՒԲԵՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հրապարակի վրա է «Հայ մատենագիրները հայոց գրի և թարգմանչաց մասին» գիրքը, որին անդրադառնում ենք տարիներ անց՝ նկատի ունենալով նրանում տեղ գտած քերականական գիտելիքների կարևորությունը³:

Լավ է, որ նաև մեր օրերում են լույս տեսնում նման գրքեր, որոնք անհրաժեշտ են հայ բազմադարյան գրավոր մշակույթի վերաբերյալ քաղվածաբար տեղեկացում ունենալու համար, որովհետև դա այն մշակույթն է, որ անսպառ աղբյուր է հայերենի և հայ հանրության վերաբերյալ լիաձավալ պատկերացում ունենալու, թեկուզև իմացածի վրա ավելին դնելու առումով:

Այս ժողովածուի մեջ արժանի տեղ են գտել նաև հայ քերականություններում հայտնի այն հատվածները, որոնք վերաբերում են հայոց այբուբենի գյուտին և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ազգաշահ առաքելությանը⁴: Սա մի արժեքավոր գիրք է. որ ունի մատենագիտական (աղբյուրագիտական) մեծ արժեք՝ կազմված հմուտբանասերների տևական աշխատանքով:

Ընդգրկված են Դիոնիսիոս Թրակացու (մ. թ. ա. 170-89 թթ.) «Արուեստ քերականի» (Τεχνή γραμματικη) դասագրքի թարգմանությունից բացի՝ տասնութ անուն-քերականից քաղված հատվածներ⁵. Այդ երախտավորներն են՝ Դավիթ քերական (VI դ.), Մովսես Քերթոզ (V դ. - VI դ. 1-ին կես), Անանուն Մեկնիչ (?), Ստեփանոս Սյունեցի (? – 735 թ.), Համամ Արևելցի (IX դ.), Գրիգոր Մագիստրոս (985-1058 թթ.), Արիստակես Գրիչ (XII դ.), Վահրամ Րաբունի (?), Վարդան Արևելցի (1198-1271 թթ.), Հովհաննես Երզնկացի (1230-1298 թթ.), Գեորգ

³ Հայ մատենագիրները հայոց գրի և թարգմանչաց մասին, աշխատասիրությամբ՝ Հ. Քյոսեյանի և Վ. Դևրիկյանի, Ե., «Անկյունաքար» հրատ., 2019, 708 էջ:

⁴ Նույն տեղում, էջ 423-530:

⁵ Հարկ ենք համարում հիշել այդ քերականներին՝ իբրև լրացուցիչ իրազեկում տվյալ բնագավառի երևելի երախտավորների մասին, որոնց աշխատանքներին, ի դեպ, մեզանում ոչ բոլոր ուսումնասիրողներն են տեղյակ կամ նկատի են ունեցել դրանք իրենց համապատասխան աշխատություններում:

Սկևռացի (1246/47-1301 թթ.), Եսայի Նշեցի (1260/5-1338 թթ.), Հովհաննես Ծործորեցի (1282/83-1340 թթ.), Առաքել Սյունեցի (1350-1422 թթ.), Կիրակոս Երզնկացի (? – 1355 թ.), Տիրատուր Կիլիկեցի (XIV դ.), Գրիգոր Տաթևացի (1346-1409 թթ.), Դավիթ Զեյթունցի (1530/1540-1619 թթ.), Պետրոս Աստապատեցի (XVII դ.)⁶:

Այս ժողովածուից ավելի մատչելի ձևով տեղեկանում ենք, թե միջնադարյան քերականության բնագավառում ո՛ր մեկնիչը կամ գրագետն է ավելի լայնորեն անդրադարձել գրերի գյուտին և որպիսությանը, առավել ևս այն, թե ո՛ր հեղինակի աշխատանքում է մեսրոպյան գրի տեսությունն ավելի ամբողջական ձևով ներկայացվում: Սրանք հարցեր են, որոնք ներկայումս նույնպես հետաքրքրական են, մանավանդ հայերենի պատմական հնչյունաբանությանը վերաբերող արդի տարբեր հարցադրումների տեսանկյունից:

Մինչև այս էլ գիտեինք, իսկ այս դեպքում ավելի ևս տեղեկանում ենք, որ առավել ծավալուն և ընդգրկուն տեղեկություններ և տեսական ուղղվածություն ունեն հիշյալ հեղինակներից հատկապես Գրիգոր Մագիստրոսի, Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացու, Եսայի Նշեցու, Հովհաննես Ծործորեցու, Առաքել Սյունեցու Պետրոս Աստապատեցու քերականությունները:

Այնպես որ ինչպես հայ մատենագրության այլ ժանրերում եղած տեղեկությունների գրի գյուտի և որպիսության մասին, այնպես և քերականական և հարակից բնույթի աշխատություններում պարզորոշ, բնագրային տեղեկություններով նկատելի է հայոց գրի ստեղծման ինչությունը, գրային համակարգի («այբուբենի») կառուցվածքային տարատեսակությունը:

Համահավաք այս գիրքը, որ մի տեսակ քրեստոմատիկ աշխատություն է, մեծ դրվատանքի արժանի նպաստ է հայագիտությանը: Այն, ի դեպ, բացի քերականական մեկնություններից կատարված բանաքաղություններից, նույնպիսին գտնում ենք այլ բնույթի աղբյուրներում՝ պատմագրական, ներբողական-քարոզխոսական, դավանական և

⁶Այս քերականների հիմնական մասի աշխատություններին 1950-ական թթ. Անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ գործ ունենալով բնագրերի հետ, այնինչ հետագա շատ ուսումնասիրողներ հարկավոր դեպքում հիմնվել են միայն մեծանուն լեզվաբանի կողմից կատարվածի վրա, իսկ հիշյալ հեղինակների մյուս մասին ամենևին չեն անդրադարձել: Ըստ այսմ ևս մեծանում է գրախոսվող գրքի նշանակությունը:

մեկնաբանական, սրբոց թարգմանչաց գանձարանային կանոններ, չափածո գործեր և ակրոստիկոսներ, այլև տարաբեր մանր բնագրեր, նոր շրջանի գրականություն և այլն:

Հայ քերականների աշխատանքներում նկատում ենք նաև այնպիսի տերմիններ և տերմինային անվանումներ, հատկապես ուշ միջնադարի լեզվամտածողությամբ կազմված բառեր, որոնք չենք գտնում բառարաններում, ուստի կարոտ են լեզվաբանական հատուկ ուսումնասիրության:

Գիրքն ունի գործնական-կիրառական կողմ. դա այն է, որ հայ հին և միջնադարյան մատենագրական աղբյուրներին ոչ բոլոր մասնագետներն են տրամադիր այդ աղբյուրների հետ գործ ունենալու (որն, ինչ խոսք, ավստոսալի է), ուստի այս գրքով կարելի է գիտական մանրամասն տեղեկություններ քաղել հայերեն գրերի և թարգմանիչների, ինչպես նաև հետագա մեկնիչների քերականագիտական ներդրման վերաբերյալ: